ԵԴ/50123/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 մայիսի 2023 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Դիանա Գաբրիելյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԴ/50123/02/21 քաղաքացիական գործի տարածքային ընդդատությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը 2021 թվականի նոյեմբերի 4-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Դիանա Գաբրիելյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Իսկանդարյան)՝ 2021 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և որոշվել է գործը քննել պարզեցված վարույթի կարգով:

3. ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից 2022 թվականի մարտի 14-ին կայացված թիվ ԲԴԽ-24-Ո-Կ-6 որոշմամբ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս.Իսկանդարյանի լիազորությունները դադարեցնելու հանգամանքով պայմանավորված, թիվ ԵԴ/50123/02/21 քաղաքացիական գործը վերամակագրվել է նույն դատարանի դատավոր Էդ. Ամալյանին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ, և որոշվել է այն քննության առնել պարզեցված վարույթի կարգով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ, պարզեցված վարույթը դադարեցվել է, և որոշվել է գործը քննել ընդհանուր հայցային վարույթի կարգով՝ նշանակելով նախնական դատական նիստ:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ, թիվ ԵԴ/50123/02/21 քաղաքացիական գործը հանձնվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

6. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ, գործի ընդդատությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

7. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի ապրիլի 21-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

8. «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2021 թվականի նոյեմբերի 4-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված հայցադիմում, որպես պատասխանող Դիանա Գաբրիելյանի հաշվառման հասցե նշվել է՝ *«ք.Երևան, Վ.Մամիկոնյան փ. 2 նրբ., 4 փ.»*[1]:

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթ 4:

8.1. Գործի քննության ընթացքում պարզվել է, որ պատասխանող Դիանա Գաբրիելյանի հասցեն է՝ *«Արարատ, գ. Հայանիստ, Վ.Մամիկոնյան փ. 2 նրբ., 4 տ.»*[2]:

9. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 25-րդ հոդվածներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի փետրվարի 6-ին որոշում է կայացրել քաղաքացիական գործն Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն արձանագրում է, որ հայցվորը, որպես պատասխանողի հասցե, նշել է «ք.Երևան, Վ.Մամիկոնյան փ. 2 նրբ., 4 տուն», մինչդեռ գործի քննության ընթացքում պարզվել է, որ պատասխանողի հասցեն է հանդիսանում «Արարատ, գ.Հայանիստ. Վ.Մամիկոնյան փ. 2 նրբ., 4 տ.», որպիսի հասցեով առաքված դատավարական փաստաթղթերը պատասխանողի կողմից ստացվել են:*

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»[3]:

10. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածին, 25-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 26-րդ հոդվածի 1-ին մասին, 2023 թվականի ապրիլի 14-ի որոշման մեջ նշել է, որ համաձայն չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործը տարածքային ընդդատությամբ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հանձնելու որոշման հետ՝ այն պատճառաբանությամբ, որ. *«Տվյալ դեպքում գործում բացակայում է պատասխանող Դիանա Գաբրիելյանի կողմից գործը Դատարանում քննելու վերաբերյալ առարկությունը, հետևաբար, քանի դեռ Դատարանը չի պարզել պատասխանողի կողմից նշված հարցի վերաբերյալ առարկություն ունենալու հանգամանքը, գտնում եմ, որ գործը պետք է շարունակվի քննվել Դատարանում (…)»*[4]:

---

[2] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթ 57:
[3] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթ 57:
[4] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 65-67:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/50123/02/21 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Դիանա Գաբրիելյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, պետք է շարունակվի քննվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:*

12. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի հանմաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել նույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ այն դեպքում, երբ պատասխանողը հանդիսանում է ֆիզիկական անձ, որպես կանոն հայցը ներկայացվում է նրա հաշվառման վայրի դատարան, իսկ այդպիսին չունենալու դեպքում՝ նրա բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, բացառությամբ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված լինելու դեպքի:

Ընդ որում, օրենսդիրը դատարանի համար պարտականություն է սահմանել գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշում կայացնել բոլոր այն դեպքերում, երբ գործը քննելիս պարզվում է, որ այն վարույթ է ընդունվել բացառիկ տարածքային ընդդատության կամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

Ի տարբերություն վերը նշված դեպքերի՝ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն իրավասու է հանձնելու այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ: Ընդ որում, նման առարկության առկայությունը կամ բացակայությունը կարող է պարզվել բացառապես դրա վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը դատարանի կողմից բացահայտելու միջոցով, որպիսի դատավարական գործողությունները կարող են կատարվել, իսկ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշումը կարող է կայացվել բացառապես մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը: Նման առարկություն տվյալ ժամանակահատվածում չներկայացվելու դեպքում դատարանը պարտավոր է շարունակել գործի քննությունը:

13. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից բխում է, որ.

- «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2021 թվականի նոյեմբերի 4-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված հայցադիմումում որպես պատասխանող Դիանա Գաբրիելյանի հաշվառման հասցե նշվել է՝ *«ք.Երևան, Վ.Մամիկոնյան փ. 2 նրբ., 4 տ.»*[5],

- գործի քննության ընթացքում պարզվել է, որ պատասխանող Դիանա Գաբրիելյանի հասցեն է՝ *«Արարատ, գ.Հայանիստ, Վ.Մամիկոնյան փ. 2 նրբ., 4 տ.»*[6],

- հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 25-րդ հոդվածներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի փետրվարի 6-ին որոշում է կայացրել քաղաքացիական գործն Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն*

[5] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը:

արձանագրում է, որ հայցվորը, որպես պատասխանողի հասցե, նշել է «ք.Երևան, Վ.Մամիկոնյան փ. 2 նրբ., 4 տուն», մինչդեռ գործի քննության ընթացքում պարզվել է, որ պատասխանողի հասցեն է հանդիսանում «Արարատ, գ.Հայանիստ, Վ.Մամիկոնյան փ. 2 նրբ., 4 տ.», որպիսի հասցեով առաքված դատավարական փաստաթղթերը պատասխանողի կողմից ստացվել են»[7],

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածին, 25-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 26-րդ հոդվածի 1-ին մասին, 2023 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ արձանագրել է, որ համաձայն չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործը տարածքային ընդդատությամբ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հանձնելու որոշման հետ՝ այն պատճառաբանությամբ, որ. *«Տվյալ դեպքում գործում բացակայում է պատասխանող Դիանա Գաբրիելյանի կողմից գործը Դատարանում քննելու վերաբերյալ առարկությունը, հետևաբար, քանի դեռ Դատարանը չի պարզել պատասխանողի կողմից նշված հարցի վերաբերյալ առարկություն ունենալու հանգամանքը, գտնում եմ, որ գործը պետք է շարունակվի քննվել Դատարանում»*[8]:

14. Սույն որոշման 12-րդ կետում նշված իրավական դիրքորոշումները կիրառելով վերը թվարկված փաստական հանգամանքների նկատմամբ՝ հարկ է արձանագրել, որ տվյալ դեպքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, գործը ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին որոշում կայացնելու պահին, բավարար հիմքեր չի ունեցել նման որոշում կայացնելու համար, քանի որ թեև պարզել է, որ գործը վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, այնուամենայնիվ պարտավոր էր մինչև վերը նշված որոշումը կայացնելը պարզել՝ արդյո՞ք պատասխանողն առարկում է գործի քննությունը տվյալ դատարանում շարունակելուն: Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ քաղաքացիական գործի նյութերում բացակայում է նման փաստի վերաբերյալ ապացույցը, բացի այդ դրա վերաբերյալ որևէ նշում չի պարունակում նաև

[7] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 6-ի որոշումը:

15. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ թիվ ԵԴ/50123/02/21 քաղաքացիական գործը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին որոշում կայացնելիս բացակայել են գործն ըստ տարածքային ընդդատության հանձնելու համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը, ուստի Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ տվյալ դեպքում սույն քաղաքացիական գործի քննությունը պետք է շարունակվեր Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, ըստ էության, հիմնավոր է:

16. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ԵԴ/50123/02/21 քաղաքացիական գործը, ***գործի քննության այս փուլում առկա փաստական հանգամանքների պայմաններում***, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/50123/02/21 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Դիանա Գաբրիելյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ